# «Հիացած եմ գիտնականով եւ մարդով»

երկրում ես արել եմ եւս մի հայտնություն: Այդ այն է, որ կենսապահովման ոլորտի նկատմամբ ունեցած ուշադրությունից զատ, այս քարառատ ու լեռնառատ երկրում մշտապես ուշադրության կենտրոնում է բնակչության ոգեղեն ոլորտի պահպանումը: Քաղաքակրթությունների ու խաչաձեւվող սրերի խաչմերուկում ապրող այս ժողովուրդը զարմանալիորեն մշտապես դեպի վեր ոգեղենի հետեւից է նայել: Գուցե թե դա էլ նրան կենդանի է պահել ու այսքան լուսավոր: Հայաստանում, սկսած սովորական աշխատավորից մինչեւ ղեկավար պաշտոնյաները, հարգանքով ու հպարտությամբ են տալիս մշակույթի գործիչների անունները: Նույն կերպ, հայրենական մշակույթը բարձր պահող գործիչների անունները ես լսեցի հանրապետության նախարարների խորհրդում, նրա ղեկավար Ֆադեյ Տաճատի Սարգսյանից:

Վերջինիս հետ հանդիպումն էլ դարձյալ մտորումների տեղիք տվեց, եւ, իհարկե, հիացական ու զարմանքով լի մտորումների: Ես, որ լսել էի նրա ծանրաբեռնված աշխատանքային գործունեության եւ խորհրդային հաշվողական, ռազմական կապի զարգացման ու արդյունաբերության մեջ նրա ներդրումների մասին, մտածում էի, որ երկու խոսքը բավական կլիներ նրա հետ ծանոթության եւ նրան չխանգարելու համար: Մանա-



կարեւոր է ունենալու հայ ժողովրդի մշակույթը, քանի որ կառավարության մոտեցումը նրան, չափվում է Ֆադեյ Տաճատիչի նման անհատների մոտեցումով: Վերջինիս մոտեցումը գրականության ու արվեստի տասնօրյակների գաղափարներին պարզապես ոգեւորիչ էր: Ոգեւորիչ էին գրչագիր ընկերներին տարբեր երկրներում իրար միավորելու եւ գրականության դերի բարձրացման մասին նրա ունեցած հայացքները: Ինձ ասել էին, որ այս անձնավորությունը գաղթ ու դառնություն տեսած մեծերի ժառանգ է, եւ հանդիպելով նրան, ես մեկ անգամ եւս համոզվեցի, որ հայ ժողովրդի այս հատվածի ժառանգները աշխարհին մարդկային ոգին պահպանելու մասին դեռ շատ ասելիքներ ունեն: Մի՞թե այդ մասին չէին Ֆադեյ Տաճատիչի

կանալի ձեւով հանգում էին մարդկային ներաշխարհի կարեւորությանը, ինչպես նաեւ՝ կեցության համար աներեւույթ անհրաժեշտությունների գոյության խնդրին: Էլ չեմ անդրադառնում լույսի հավերժությանը ձգտող հայոց «նշխարի»՝ Նարեկացու երեւույթին: Սակայն որ կյանքի կառուցման բովում մշտապատրաստ անձնավորությունը կարող էր այդքան նրբանկատորեն խոսել ոգու աշխարհի պահպանության, հայ մշակույթի դերի ու գործունեության մասին, ինձ համար կրկին մի նոր հայտնություն էր այստեղ:

Ֆադեյ Տաճատիչին ես ճանաչեցի եւ ընդունեցի որպես մարդու, որը գիտական ու մշակութային բնագավառից զատ, շատ մեծ նրբանկատություն ուներ մարդու մեջ մարդկայինի գնահատման հարցում, ծանոթ էր աշխատավոր բնակչության հոգսերին, դժվարություններին եւ շատ ուշադիր էր ընդունում յուրաքանչյուր անհատի խնդիրները:

**ԷԴՈՒԱՐԴԱՍ ՄԵԺԵԼԱՅՏԻՍ**
**Լիտվական ժողովրդական բանաստեղծ, Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ, Ե. Չարենցի, Ն. Վապցարովի, Ջ. Ներուի եւ Լենինյան մրցանակների դափնեկիր:**

**Լիտվերենից թարգմանեց՝**
**ՖԵԼԻՔՍ ԲԱԽՉԻՆՅԱՆ**